«ՔՎԱՆՏ» ՎԱՐԺԱՐԱՆ

Հաշվետվություն

2015-2016

Ուսումնական տարվա գործունեության

ԵՐԵՎԱՆ - 2016

ՀՏԴ 373
ԳՄԴ 74.2
Հ 327

Հրատարակվում է «Քվանտ» վարժարանի գիտամանկավարժական խորհրդի որոշմամբ

Կազմեցին՝
Ֆ.մ.գ.թ. Ռոբերտ Վարդանյանը
Կ.գ.թ. Լևոն Ասատրյանը
Պ.գ.թ. Միքայել Մալխասյանը
Արմինե Հովհաննիսյանը
Գոհար Սարգսյանը

Հ 327 Հաշվետվություն 2015-2016 ուսումնական տարվա գործունեության / Վարդանյան Ռ., Ասատրյան Լ., Մալխասյան Մ., Հովհաննիսյան Ա., Սարգսյան Գ.; «Քվանտ» վարժարան. - Երևան, 2016. - 48 էջ:

Սույն հաշվետվության մեջ ներկայացվում են Երևանի «Քվանտ» վարժարանի գործունեության առանցքային ցուցանիշները 2015-2016 ուսումնական տարվա ընթացքում:

ՀՏԴ 373
ԳՄԴ 74.2

ISBN 978-9939-846-11-8

© «Քվանտ» վարժարան, 2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Համառոտ ակնարկ 1991-2016 թթ. գործունեության.....5

Վարչական և ուսուցչական կազմ.....8

Միջոցառումներ.....10

Ամբիոնների գիտամանկավարժական գործունեություն.....14

Հայոց լեզվի և գրականության ամբիոն.....14

Անգլերենի ամբիոն.....14

Աշխարհագրության ամբիոն.....15

Ինֆորմատիկայի ամբիոն.....19

Կենսաբանության ամբիոն.....20

Մաթեմատիկայի ամբիոն.....20

Նախնական զինվորական պատրաստության և ֆիզկուլտուրայի ամբիոն.....22

Պատմության ամբիոն.....22

Ռուսաց լեզվի ամբիոն.....23

Քիմիայի ամբիոն.....24

Ֆիզիկայի ամբիոն.....25

Տարրական դպրոց.....26

Սոցիալ-հոգեբանական ծառայություն.....27

Ծնողական խորհուրդ.....28

Աշակերտներ (ընդհանուր ցուցանիշներ).....29

Աշակերտական խորհուրդ.....30

Ավարտական և միասնական քննություններ, բուհական ընդունելություն.....32

Օլիմպիադաներ և առարկայական ստուգատեսներ.....34

Գործընկերներ և միջազգայնացում.....40

Հետազոտական աշխատանքներ.....42

Հավելված. «Քվանտ» վարժարանի 25-ամյա հոբելյանին նվիրված հանդիսությունը ԵՊՀ-ում.....45

ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ 1991-2016 ԹԹ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

«Քվանտ» վարժարանը Հայաստանի Հանրապետության փորձարարական, ոչ պետական առաջին դպրոցն է, որը գործում է 1991 թ. սեպտեմբերից, երբ բացվել են հոսքային ուսուցմամբ 9-րդ և 10-րդ դասարանները՝ ընդհանուր շուրջ 50 աշակերտներով: 1992 թ. մարտի 6-ին վարժարանը ստացել է ՀՀ լուսավորության նախարարության № 001 պետական արտոնագիրը և ուստարվա վերջին տվել առաջին 21 շրջանավարտները, որոնցից 19-ն առաջին տարում պետպատվերով ընդունվել են պետական բուհեր:

Հաշվի առնելով այս բացառիկ արդյունքները՝ 1994 թ. ՀՀ կառավարության որոշմամբ վարժարանի շրջանավարտներին իրավունք է տրվել՝ հարցազրույցով ընդունվելու պետական բուհերի բնագիտական ֆակուլտետներ: Մինչև միասնական քննությունների համակարգի ներդրումն այս սկզբունքով վարժարանի՝ բարձր առաջադիմությամբ սաներն առանց ընդունելության քննություն հանձնելու համալրում էին բուհերում պետպատվերով սովորող ուսանողների շարքերը:

Ֆիզիկամաթեմատիկական, քիմիակենսաբանական, հումանիտար և տնտեսագիտական ուղղություններով հոսքային ուսուցմամբ ավագ դպրոցի գործարկումից հետո 1990-ական թթ. աստիճանաբար ընդլայնվել է վարժարանում կրթություն ստացող աշակերտների տարիքային շրջանակը: Այսպես, 1993 թ. բացվել է 8-րդ, 1994 թ.՝ 7-րդ, 1996 թ.՝ 6-րդ, 1997 թ.՝ 5-րդ դասարան:

1995 թ. սկսվել է համակարգչային ծրագրերի դասավանդումը, և 1997 թ. վարժարանում առաջին անգամ կիրառվել են տեղեկատվական տեխնոլոգիաների վրա հիմնված դասավանդման մեթոդներ:

2000 թ. բացվել է համակարգչային երկրորդ լսարանը, որն ապահովված էր համացանցով, իսկ 2002 թ. հավանության է արժանացել վարժարանում մշակված հանրակրթական դպրոցում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման և ինֆորմատիկայի դասավանդման «Արագած» ծրագիրը:

2001 թ. բացվել է «Ուղեծիր» ռազմամարզական ճամբարը, որտեղ ամառային 12-օրյա տեսական և գործնական ուսուցմամբ աշակերտ-

ները յուրացնում են նախնական զինվորական պատրաստություն առարկայի հիմունքները:

2007-2011 թթ. կատարած ներքին բարեփոխումների և ուսուցիչների բազմակի վերապատրաստումների շնորհիվ 2011 թ. վարժարանն անդամագրվել է IBO (The International Baccalaureate Organization – Միջազգային բակալավրիատ) միջազգային կրթական կազմակերպությանը, ինչի շնորհիվ վարժարանի 11-12-րդ դասարանների մի խումբ սաներ յուրաքանչյուր տարի հնարավորություն են ունենում կրթություն ստանալ միջազգային ծրագրերով և ընդունվել աշխարհի առաջատար համալսարաններ:

2014 թ. բացվել է վարժարանի տարրական դպրոցը, որը նոր շունչ է հաղորդել առավելապես ակադեմիական միջավայրով հայտնի վարժարանի առօրյային:

2015 թ. ՀՀ ԿԳՆ, «ՎիվաՍել-ՄՏՍ», «Սինոփսիս Արմենիա» և «Յունիքոմփ» ընկերությունների միջև կնքված քառակողմ հուշագրի արդյունքում վարժարանում մեկնարկել է «Միկրոէլեկտրոնիկա», «Հեռահաղորդակցության հիմունքներ», «Տեղեկատվական տեխնոլոգիաներ» մասնագիտական առարկաների դասավանդումը:

2015 թ. «Ուղեծիր» ճամբարում կազմակերպվել է ՀՀ-ում առաջին միջազգային ամառային դպրոցը ՄԲ «Դիպլոմա» ծրագրով սովորող աշակերտների համար, որին մասնակցել են աշակերտներ ոչ միայն ՀՀ գործընկեր դպրոցներից, այլև Սինգապուրից:

Հիմնադրման օրվանից վարժարանի սաներն ակտիվորեն մասնակցել են դպրոցական առարկայական օլիմպիադաներին՝ արժանանալով տարբեր մըրցանակների: 1997-1998 ուստարվա արդյունքներով «Քվանտ»-ն առաջին անգամ արժանացել է Երևանի քաղաքապետարանի և ՀՀ ԿԳՆ «Մեծ մրցանակ»-ներին՝ օլիմպիադաների քաղաքային և հանրապետական օլիմպիադաներում դիպլոմների թվով զբաղեցնելով առաջին տեղը: Նույն ուստարում վարժարանի սաներն առաջին անգամ մրցանակի են արժանացել միջազգային օլիմպիադաներում՝ նման հաջողություններն ամենամյա ավանդույթ դարձնելով: 1998-2016 թթ. վարժարանի սաներին է բաժին ընկել միջազգային օլիմպիադաներում ՀՀ աշակերտների վաստակած մեդալներից 53-ը:

Տնօրենության և աշխատակիցների համակարգված աշխատանքի շնորհիվ վարժարանում քանիցս պատրաստվել ու հրատարակվել են ուսումնաօժանդակ ձեռնարկներ և դասագրքեր, օրինակ՝ 2009 թ. ՀՀ ԿԳՆ պատվերով վարժարանը պատրաստել և ՀՀ դպրոցներին է

բաժանել ՀՀ-ում առաջին էլեկտրոնային ձեռնարկները՝ անգլերեն և ռուսերեն առարկաների դասավանդումը 6-9 դասարաններում ավելի արդյունավետ դարձնելու համար: ՀՀ կառավարության՝ 08.04.2010 թ. № 13 և 20.05.2010 թ. № 19 որոշումների համաձայն վարժարանում իրականացվում են տարրական դպրոցում համակարգչային հմտությունների ուսուցման և հանրակրթության ոլորտում «Լոգո» համակարգչային հայալեզու առաջին ուսուցողական միջավայրի ներդրման ծրագրերը:

Վարժարանը և տնօրեն Ռոբերտ Վարդանյանը տարբեր առիթներով արժանացել են ՀՀ պետական, ԳԱԱ, ԵՊՀ և արտասահմանյան գործընկերների կողմից շնորհված տարբեր մրցանակների ու պարգևների՝ ՀՀ վարչապետի պատվոգրի (2001 թ.), ՀՀ ԿԳՆ ոսկե մեդալի (2006 թ.), ԵՊՀ ոսկե մեդալի (2001 և 2011 թթ.), ՏՏ ոլորտում համաշխարհային ներդրման համար ՀՀ Նախագահի մրցանակի (2016 թ.) և այլն: ՀՀ Նախագահի 12.09.2006 թ. հրամանագրով Ռ. Վարդանյանին շնորհվել է ՀՀ վաստակավոր մանկավարժի կոչում:

Կրթօջախի ուսուցիչները ևս արժանացել են պետական տարբեր պարգևների: ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ է շնորհվել ինֆորմատիկայի ուսուցիչ Արսեն Դարբասյանին (2010 թ.), «Վաստակավոր մանկավարժ»-ի կոչում՝ քիմիայի ուսուցիչ Վիտուշ Սարգսյանին (2015 թ.), ՀՀ ԿԳՆ ոսկե մեդալ՝ կենսաբանության ուսուցիչ Լևոն Ասատրյանին (2011 թ.), ֆիզիկայի ուսուցիչ Հարություն Խաչատրյանին (2011 թ.), քիմիայի ուսուցիչ Վիտուշ Սարգսյանին (2012 թ.), ֆիզիկայի ուսուցչուհի Բելլա Դավթյանին (2014 թ.), կենսաբանության ուսուցչուհի Գոհար Խաչատրյանին (2016 թ.) և ֆիզիկայի ուսուցիչ Մաելս Ազիզբեկյանին (2016 թ.), ՀՀ ՊՆ մեդալ՝ հասարակագիտության ուսուցչուհի Արաքսյա Սիմոնյանին (2013 թ.), Երևանի քաղաքապետարանի պատվոգիր՝ պատմության ուսուցչուհի Եվգենյա Ղալումյանին (2014 թ.), ԵՊՀ ոսկե մեդալ՝ պատմության ուսուցիչ Միքայել Մալխասյանին (2016 թ.), աշխարհագրության ուսուցիչ Սեյրան Սուվարյանին (2016 թ.) և Սմբատ Շահինյանին (2016 թ.): Վարժարանի բազմաթիվ աշխատակիցներ արժանացել են նաև միջազգային տարբեր կազմակերպությունների մրցանակների, ԵՊՀ պատվոգրերի և այլևայլ պարգևների:

ՎԱՐՉԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԿԱԶՄ

«Քվանտ» վարժարանի կառավարումն իրականացվում է մի քանի օղակներով: Կառավարման օղակներից մեկը կառավարման ավագ խումբն է, որի կազմում են տնօրեն ֆ.մ.գ.թ. Ռ. Վարդանյանը, ուսումնական գծով փոխտնօրեն կ.գ.թ. Լ. Ասատրյանը, հետազոտությունների ու նորարարական ծրագրերի գծով փոխտնօրեն ֆ.մ.գ.թ. Մ. Սարգսյանը, գիտամանկավարժական խորհրդի նախագահ ֆ.մ.գ.թ., դոց. Ի. Հարությունյանը, սոցիալ-հոգեբանական ծառայության ղեկավար Ե. Բարտենևան և ընդունելության գծով պատասխանատու Ա. Հովհաննիսյանը: Այս խմբի որոշումները քննարկվում են վարժարանի գիտամանկավարժական խորհրդում, որից հետո միայն դրանք ստանում են իրավական ուժ: Խորհրդի կազմում են կառավարման ավագ խմբի 7 անդամները, 11 ամբիոնների վարիչները, աշակերտական խորհրդի նախագահն ու փոխնախագահը, որոշ հարցերի քննարկման պարագայում՝ նաև ծնողական խորհրդի անդամները:

Վարժարանի կառավարման համակարգում կարևոր ներկայացուցչական դեր ունեն աշակերտական և ծնողական խորհուրդները:

Ուսումնական գործընթացը վարժարանում կազմակերպվում է գիտակրթական հաստատություններին բնորոշ սկզբունքով՝ ամբիոնների միջոցով: Ամբիոններում մշակված աշխատանքային և առարկայական ընդհանուր սկզբունքներով էլ վարժարանում մանկավարժական գործունեություն են ծավալում ուսուցիչները: Ներկայումս գործում են Հայոց լեզվի և գրականության, Անգլերենի, Աշխարհագրության, Ինֆորմատիկայի, Կենսաբանության, Մաթեմատիկայի, Նախնական զինվորական պատրաստության և ֆիզկուլտուրայի, Պատմության, Ռուսաց լեզվի և գրականության, Քիմիայի, Ֆիզիկայի ամբիոնները:

Հաշվետու ուստարում վարժարանում աշխատել են գիտական աստիճան ունեցող 24 անձինք՝ տնօրեն ֆ.մ.գ.թ. Ռ. Վարդանյանը, փոխտնօրեն ֆ.մ.գ.թ. Մ. Սարգսյանը, աշխարհագրության ուսուցիչներ ա.գ.թ., դոց. Ս. Սուվարյանը, ա.գ.թ., ասիստ. Գ. Ալեքսանյանը և կ.գ.թ. Վ. Ասատրյանը, ինֆորմատիկայի ուսուցիչներ ֆ.մ.գ.թ. Ա. Դարբասյանը և տ.գ.թ. Կ. Դեղոյանը, հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի բ.գ.թ. Կ. Ասատրյանը, կենսաբանության ուսուցիչ կ.գ.թ. Լ. Ասատրյանը, մաթեմատիկայի ուսուցիչներ ֆ.մ.գ.թ., դոց. Ս. Շահինյանը, ֆ.մ.գ.թ., դոց. Մ. Մարտիրոսյանը, ֆ.մ.գ.թ. Ա. Կարապետյանը, ֆ.մ.գ.թ., դոց. Ց.

Թերջյանը, ֆ.մ.գ.թ. Ս. Գոգյանը և բ.գ.թ. Ա. Սարգսյանը, պատմության ուսուցիչներ պ.գ.թ. Ա. Սիմոնյանը, պ.գ.թ. Ս. Սիմոնյանը և պ.գ.թ., ասիստ. Մ. Մալխասյանը, ռուսաց լեզվի և գրականության ուսուցիչներ մ.գ.թ., դոց. Ս. Սամուելյանը և բ.գ.թ. Ա. Աբգարյանը, տնտեսագիտության ուսուցիչ տ.գ.դ., դոց. Ռ. Հայրապետյանը, քիմիայի ուսուցիչ ք.գ.թ. Վ. Սարգսյանը, ֆիզիկայի ուսուցիչներ ֆ.մ.գ.դ., պրոֆ. Կ. Ղամբարյանը և ֆ.մ.գ.թ., դոց. Ի. Հարությունյանը:

Փաստորեն, դասավանդող 89 ուսուցիչներից 24-ը, այսինքն՝ 27 %-ը գիտական աստիճան ունեն: Նրանց մեծ մասը համատեղում է աշխատանքը ԵՊՀ-ում, ՀՀ ԳԱԱ-ում կամ էլ այլ բուհերում և գիտահետազոտական կենտրոններում:

Վարժարանի ուսուցիչները հաշվետու ուստարում հեղինակել և հրատարակել են գիտական 42 աշխատություններ, այդ թվում՝ 8 մենագրություն և ուսումնամեթոդական աշխատանք, 30 գիտական հոդված (ընդ որում՝ 2-ը՝ երկլեզու տարբերակով), զեկուցումների թեզիսների 1 ժողովածու, 3 թեզիս:

Մարդկային ռեսուրսների համաչափ բաշխման շնորհիվ հնարավոր է եղել կազմակերպել այլընտրանքային (լրացուցիչ) առարկաների ուսուցում, մասնավորապես՝ տարբեր դասարանների կրթական ծրագրերում կամ առանձին խմբակների միջոցով ներդրվել է «Տեղեկատվական տեխնոլոգիաներ», «Հեռահաղորդակցություն», «Միկրոէլեկտրոնիկա», «Տնտեսագիտություն» (ՄԲ), «Ֆրանսերեն» (ՄԲ), «Տեղեկատվական տեխնոլոգիաները գլոբալ հասարակությունում» («ITGS», ՄԲ), «Իմացության տեսություն» («Theory of Knowledge (TOK)»), «Ստեղծագործ միտք, ակտիվություն, ծառայություն» («Creativity, Action, Service (CAS)»), «Հոգեբանություն» (ՄԲ) և այլ առարկաների դասավանդումը:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Հաշվետու ուստարին աչքի է ընկել վարժարանում կազմակերպված միջոցառումների առատությամբ, ինչը պայմանավորված է կրթօջախի 25-ամյա հոբելյանով: Վարժարանի տնօրենության, գիտամանկավարժական խորհրդի, կազմակերպիչ-պատասխանատուների, դասղեկների, աշխորհրդի և ուսուցիչների կողմից կազմակերպվել է ընդհանուր 201 միջոցառում՝ ներառյալ ներդասարանական, միջդասարանական, համավարժարանային, միջդպրոցական, հանրապետական և միջազգային բոլոր կարգի միջոցառումները: Միջոցառումներից 84-ը նախատեսված է եղել 10-12-րդ դասարանների աշակերտների համար:

Ստորև ներկայացված են համավարժարանային միջոցառումները.

ա. Սեմինարներ, դասախոսություններ.

1. Հանդիպում աշխարհահռչակ տիեզերագնաց Բազ Օլդրինի հետ (03.08.2015),
2. Աշակերտների մասնագիտական կողմնորոշմանն ուղղված հանդիպում ԵՊՀ ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի դեկան Վահրամ Դումանյանի հետ (24.11.2015),
3. Աշակերտների մասնագիտական կողմնորոշմանն ուղղված հանդիպում ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դեկան Գագիկ Ղազինյանի հետ (24.11.2015),
4. Աշակերտների մասնագիտական կողմնորոշմանն ուղղված հանդիպում ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի դեկան Ռոլանդ Ավագյանի, դեղագիտության և քիմիայի ֆակուլտետի դեկան Տարիել Ղոչիկյանի և դեղագիտության ամբիոնի վարիչ Աշոտ Սաղյանի հետ (28.11.2015),
5. Հանդիպում Շեֆիլդի համալսարանի միջազգային մարքեթինգի ղեկավար Գրեգորի Դիկայոսի հետ (11.12.2015),
6. «Էներգախնայող լուսավորությունը տանը և դպրոցում» թեմայով դասախոսություն (տ.գ.թ. Արտակ Համբարյան, 28.11.2015),

7. «Քվանտային կառուցվածքներ և նանոտեխնոլոգիաներ» թեմայով դասախոսություն (ֆ.մ.գ.դ., պրոֆ. Հայկ Սարգսյան, 11.12.2015),
8. Հանդիպում Կալիֆորնիայի համալսարանի դասախոս, ֆ.մ.գ.դ., պրոֆ. Վլադիմիր Գասպարյանի հետ (24.12.2015),
9. Առցանց հանդիպում տիեզերագնաց Ալեքսանդր Լավեյկինի հետ (14.02.2016),
10. Հանդիպում ժամանակակից գրողներ Նառա Վարդանյանի և Նշան Աբասյանի հետ (21.02.2016),
11. Հրթիռամոդելային խմբակի բացում (06.02.2016),
12. Հանդիպում միջազգային փորձագետ Ջուլիան Սեֆթոն-Գրինի և «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի տնօրեն Մարիլու Փափազյանի հետ (26.02.2016),
13. Առցանց հանդիպում ռուս տիեզերագնաց Օլեգ Արտեմևի հետ (06.03.2016),
14. «Առաջնորդել տեսլականով և արժեքների հիման վրա» թեմայով դասախոսություն («Կողբ» հիմնադրամի խորհրդի նախագահ, վարժարանի շրջանավարտ Արման Բարսեղյան, 05.03.2016),
15. «Գիտական բացահայտումները մեծածավալ տվյալների դարաշրջանում» թեմայով դասախոսություն (Հարավային Կալիֆորնիայի համալսարանի պրոֆեսոր Արամ Գալստյան, 05.03.2016),
16. «Մարդկության աստեղային ժամը. հուշեր Գագարինի մասին» խորագրով սեմինար (17.04.2016),
17. Առցանց սեմինար-քննարկում TRIZ-PROFI կազմակերպության գործադիր տնօրեն Անատոլի Գինի հետ (23.04.2016),
18. «Տեղեկատվական տեխնոլոգիաները դպրոցում» թեմայով դասախոսություն (Մոսկվայի պետական մանկավարժական համալսարանի ռեկտոր Ալեքսեյ Սեմյոնով, 14.05.2016),
19. Հանդիպում Սաութհեմփթոնի համալսարանի պրոֆեսոր Ալեքսեյ Կավոկինի հետ (19.05.2016),
20. Հանդիպում Հռոմի «Թոր Վերգատա» համալսարանի պրոֆեսոր Անդրեյ Վարլամովի հետ (19.05.2016):

բ. Մրցույթներ, մշակութային և այլ տիպի միջոցառումներ.

1. Գիտելիքի օրվան նվիրված միջոցառում (01.09.2015),
2. ՄԲ «Դիպլոմա» ծրագրի շրջանավարտների դիպլոմների հանձնման արարողություն (01.09.2015),
3. «Լավագույն աշակերտ – 2016» և «Լավագույն շրջանավարտ – 2016» մրցանակաբաշխություն (05.09.2015),
4. ՀՀ անկախության տոնին նվիրված Համավարժարանային արշավ դեպի Թեղենիս (21.09.2015, 22.09.2015),
5. Ուսուցչի տոնին նվիրված միջոցառում (05.10.2015),
6. Պատմության ուսուցիչ Միքայել Մալխասյանի «Պատմա-ժողովրդագրական ուսումնասիրություններ» և «Կարսի մարզի բնակչությունը (1877-1917 թթ.)» գրքերի շնորհանդես (10.10.2015),
7. Արտակարգ իրավիճակների ժամանակ դպրոցի տարհանման փորձարարական միջոցառում (28.10.2015),
8. «Կողբ» հիմնադրամի կրթաթոշակին արժանացած «Օժտված երեխաներ – 2015» մրցույթի հաղթողների դիպլոմների հանձնման արարողություն (23.12.2016),
9. «Փնտրում ենք տաղանդներ» մշակութային մրցույթ-փառատոն (19.12.2015, 19.02.2016, 04.03.2016)
10. Ամանորյա միջոցառում՝ տարրական դպրոցի սաների մասնակցությամբ (30.12.2015),
11. Համավարժարանային «ԷԹՆԻԿ-ԷՔՍՊՈ-2016» մրցույթ-փառատոն (28.12.2015, 29.12.2015),
12. «Քվանտ» վարժարանի նոր մասնաշենքի նավակատյաց հանդես (13.01.2016),
13. «Նկարիր երաժշտությունը» խորագրով նկարչական-երաժշտական մրցույթ (28.02.2016),
14. «Քվանտ» վարժարանի հիմնադրման 25-ամյակին նվիրված հանդիսություն (ԵՊՀ մեծ դահլիճ, 20.05.2016)
15. Հայոց լեզվի և գրականության ուսուցիչ Լիլիթ Հակոբյանի կողմից կազմված «25 քայլ դեպի աղբյուրը լույսի» էսսեների ժողովածուի շնորհանդես (21.05.2016),
16. Վերջին զանգին նվիրված միջոցառումներ (21.05.2016),
17. Հոբելյանական «Օժտված երեխաներ – 2016» մրցույթի մրցանակաբաշխություն (30.05.2016),
18. Վերջին զանգ (Աղավնաձոր, 26.05.2016),

19. 2015-2016 ուստարվա օլիմպիադաների և մրցույթների ամփոփիչ մրցանակաբաշխություն (03.06.2016),
20. Վարժարանի տարեկան գործունեության ամփոփիչ սեմինար-հաշվետվություն (15-17.07.2016):

Բացի վերը նշված համավարժարանային միջոցառումներից, 2015-2016 ուստարվա ընթացքում դասղեկների կողմից կազմակերպվել են արտադասարանային միջոցառումներ, այդ թվում՝ ճանաչողական այցեր պատմամշակութային վայրեր և թանգարաններ՝ Օրբելի եղբայրների, Հ. Թումանյանի և Ս. Փարաջանովի տուն-թանգարաններ, Երևանի պատմության, Հայաստանի պատմության պետական, էրեբունի, Կոմիտասի, Գաֆեսճեան, ժամանակակից արվեստի և Կենտրոնական բանկի թանգարաններ, Ս. էջմիածին, Սաղմոսավանք, Հովհաննավանք, Ամբերդ, Զվարթնոց, Սարդարապատի և Մուսա լեռան հերոսամարտերի հուշահամալիրներ, Ծիծեռնակաբերդ, Եռաբլուր, Բյուրականի աստղադիտարան և այլուր: Նմանօրինակ այցեր են կազմակերպել պատմության ուսուցչուհի Եվ. Ղալումյանը, հայոց լեզվի ուսուցչուհի Հ. Բայրամյանը, ֆիզիկայի ուսուցչուհի Բ. Դավթյանը և ուրիշներ:

Հայոց լեզվի ուսուցչուհի Լ. Հակոբյանի ջանքերով տեղի են ունեցել հանդիպումներ ժամանակակից գրականության ներկայացուցիչների՝ Նառա Վարդանյանի, Նշան Աբասյանի և այլոց հետ:

Հայոց լեզվի ուսուցչուհի Գ. Անդրեասյանի կողմից կազմակերպվել է Մայրենիի օրվան նվիրված մրցույթ, իսկ Ս. Սուվարյանի և Լ. Վարդանյանի ջանքերով անցկացվել է ամենամյա «Բրեյն ռինգ» ինտելեկտուալ մրցույթը: Վերջինս ամառային ճամբարում կազմակերպվել է Բ. Դավթյանի կողմից:

ՄԲ ճամբարում տեղի է ունեցել Մ. Մալխասյանի հեղինակային «Հենց ես եմ հաղթողը» ամենամյա ինտելեկտուալ մրցույթի հոբելյանական 10-րդ խաղը:

Դասղեկների ջանքերով տասնյակ աշակերտներ ունկնդրել են դասական երաժշտության համերգներ և դիտել թատերական ներկայացումներ:

Տնօրենությունն առանձնակի ուշադրություն է դարձրել վարժարանի լավագույն շրջանավարտների հետ ներկայիս սաների պարբերական հանդիպում-միջոցառումների կազմակերպմանը:

ԱՄԲԻՈՆՆԵՐԻ ԳԻՏԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

1. Հայոց լեզվի և գրականության ամբիոն

Ամբիոնի վարիչ՝ Հռիփսիմե Բայրամյան

Ուսուցիչներ՝ բ.գ.թ. Կարինե Ասատրյան, Արմինե Խերանյան, Գայանե Անդրեասյան, Թագուհի Մանուկյան, Լիլիթ Հակոբյան, Հասմիկ Սարգսյան, Մարիամ Ապրյան, Պետրոս Կարեյան

Հրատարակած գիտական աշխատանքներ

1. «25 քայլ դեպի աղբյուրը լույսի» (հայ և համաշխարհային գրականության քառուղիներում). գիտական զեկուցումների ժողովածու, կազմեց՝ Լ. Հակոբյանը, Երևան, 2016, 207 էջ:
2. Սարգսյան Հ., Առաքել Սյունեցու կենսագրության վերաբերյալ բանասիրական վեճերը, ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու, 2016, 1.3 (13). հասարակական գիտություններ, էջ 27-31:

Պարգևներ

1. ՀՀ ԿԳՆ պատվոգիր (Լ. Հակոբյան, 20.05.2016)
2. ՀՀ ԿԳՆ պատվոգիր (Մ. Ապրյան, 20.05.2016)
3. ԵՊՀ պատվոգիր (Ա. Խերանյան, 20.05.2016)

2. Անգլերենի ամբիոն

Ամբիոնի վարիչ՝ Ելիզավետա Բաղդասարյան

Ուսուցիչներ՝ Անահիտ Դեմուրչյան, Աննա Գրիգորյան, Արմենուհի Հակոբյան, Գոհար Սահակյան, Էմին Պողոսյան, Լիլիթ Առաքելյան, Կարինե Մարգարյան, Հասմիկ Միրզոյան, Մարինե Նազարյան, Ռուզաննա Մարգարյան, Վեհանուշ Հովհաննիսյան, Քրիստինա Տոնոյան

Մասնակցություն միջազգային համաժողովում

Margaryan R., Education First Annual Conference, Prague, 8-12 August, 2015

Պարգև
ՀՀ ԿԳՆ պատվոգիր (Ա. Դեմուրչյան, 20.05.2016)

3. Աշխարհագրության ամբիոն

Ամբիոնի վարիչ՝ ա.գ.թ., դոց. Սեյրան Սուվարյան

Ուսուցիչներ՝ տ.գ.դ., դոց. Ռուբեն Հայրապետյան, ա.գ.թ., ասիստ. Գոռ Ալեքսանյան, կ.գ.թ. Վարդան Ասատրյան, Փառանձեմ Դավթյան, Գոհար Սարգսյան

Հրատարակած գիտական աշխատանքներ

1. Altmann G., Aleksanyan G., Sustainability in tourism: problems and some basic directions of sustainable tourism management, «ԵՊՀ գիտական տեղեկագիր». Երկրաբանություն և աշխարհագրություն, 2016, թ. 2, էջ 59-67:
2. Թումանյան Դ., Հայրապետյան Ռ. և ուրիշներ (Համայնքների ֆինանսիստների միավորման փորձագետներ), Տեղական ինքնակառավարումը Հայաստանում (2015 թ.), գիրք 8, Երևան, 2016, 230 էջ:
3. Հայրապետյան Ռ., Երևան քաղաքի կառավարմանը բնակիչների մասնակցության գործոնային վերլուծություն, «Զարգացման ժամանակակից մարտահրավերներ. ՀՊՏՀ 24-րդ գիտաժողովի նյութեր», 2015, էջ 216-221:
4. Սուվարյան Յու., Հայրապետյան Ռ., Ասատրյանց Ս., Մնացականյան Տ., Ասլանյան Գ., Սաֆարյան Մ., Հայաստանի Հանրապետությունում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման բարեփոխումների գերակայությունները արդի փուլում, Երևան, 2015, («Ամբերդ» մատենաշար, թ. 19), 138 էջ:
5. Սուվարյան Յու., Հայրապետյան Ռ., Սարգսյան Վ., Ասատրյանց Ս., Գիտակրթական համակարգի և տարածքային տնտեսական զարգացման փոխառնչությունները, Երևան, 2016, 160 էջ:
6. Սուվարյան Յու., Հայրապետյան Ռ. և ուրիշներ, Մենեջմենթ, 4-րդ հրատ., Երևան, 2016, 672 էջ:

7. Սուվարյան Ս., Սերվիսը և աշխարհագրական միջավայրը, «Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման և տեղաբաշխման ժամանակակից հիմնախնդիրները», Երևան, 2015, էջ 277-280:
8. Սուվարյան Ս., Սերվիսի տեսլականները և սերվիսագիտության անհրաժեշտությունը, «ԵՊՀ գիտական տեղեկագիր». երկրաբանություն և աշխարհագրություն, 2015, թ. 3, էջ 43-50:
9. Айрапетян Р., Партисипативное бюджетирование в системе местного самоуправления Германии, East European Scientific Journal, Экономические науки, Warsaw, 2016, 5, с. 4-7.
10. Asatryan V.L., Barseghyan N.E., Dallakyan M.R., Vardanyan T.V. The Assessment Approach for the Potential of Rivers in the South-West Part of Lake Sevan as Spawning Areas for Sevan Trout. Proceedings of the IWA 8th Eastern European Young Water Professionals Conference, Gdansk, 2016, pp. 644-651.
11. Asatryan V.L., Barseghyan N.E., Vardanyan T.V., Yepremyan H.V., Hayrapetyan A.H., Dallakyan M.R., Gabrielyan B.K. Analysis of the state of biocenoses that formed in shallow areas of Small Sevan (Armenia) during the period of lake's water level rise. Inland Water Biology, 9(1), pp. 1-7, 2016. DOI 10.1134/S199508291601003 10.
12. Asatryan V.L., Dallakyan M.R. Development of the initial multimetric index for the assessment of ecological state of lake Sevan (Armenia) basin rivers. Proceedings of the IWA 7th Eastern European Young Water Professionals Conference, Belgrade, Serbia, 2015, pp. 19-28.
13. Asatryan V.L., Dallakyan M.R. The comparative assessment of rivers impact on lake Sevan's (Armenia) water quality by hydrochemical parameters. Proceedings of international conference "Modern problems of water reservoirs and their catchments", vol. 2, Perm, 2015, pp. 3-6.
14. Bulysheva N.I., Shokhin I.V., Aroutiounian R.M., Asatryan V.L. Zoobenthos of the coastal zone of lake Sevan. Proceedings of the All-Russian Scientific Conference "Ecological Strategy of

Development of Coastal Regions: Geography, Environment, Population. Medical-Ecological and Socio-Economic Problems of Coastal Regions", Rostov-on-Don, 2015, pp. 47-53.

15. Dallakyan M.R., Asatryan V.L. The changes of benthic community of Shnogh river (Armenia) under the antropogenic impact. Proceedings of international conference "Modern problems of water reservoirs and their catchments", vol. 2, Perm, 2015, pp. 229-234.
16. Ghukasyan E.Kh., Alekhnovich A.V., Badalyan N.S., Asatryan V.L., Sahakyan S.Q. The Process of Freshwater Crayfish Harvesting and its Possible Consequences in Sevan and Sominsk Lakes. Yerevan, National Academy of Sciences of RA Electronic Journal of Natural Sciences. (2016). pp.13-17.
17. Ghukasyan E.Kh., Badalyan N.S., Asatryan V.L., Kobelyan R.H., Sahakyan D.L. Natural mortality of lake Sevan crayfish in reproduction period. Electronic Journal of Natural Sciences, vol. 1(24), 2015, pp. 27-30.
18. Vardanyan H.S., Akopyan S.H., Ghukasyan E.Kh., Asatryan V.L., Kobelyan R.H., Gulanyan V.G. Eco-microbiological characteristics of rivers inflowing into Lake Sevan. Biological journal of Armenia 1(67), 2015, pp. 18-22.

Մասնակցություն միջազգային գիտաժողովներում և համաժողովներում

1. Հայրապետյան Ռ., Գլոբալ բիզնեսի, տնտեսագիտության, ֆինանսների և բանկային գործի եվրոպական ակադեմիական 3-րդ գիտաժողով, զեկուցման թեմա՝ «Տեղական ինքնակառավարման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում», Ֆրանսիա, Փարիզ, 2016 թ. հուլիս:
2. Հայրապետյան Ռ., Ժողովրդավարության համաշխարհային ֆորում, Ֆրանսիա, Ստրասբուրգ, 2015 թ. նոյեմբեր:
3. Հայրապետյան Ռ., Իրավական գիտակցության ծագումը, Շվեդիա, Լիդինգո, 2016 թ. մայիս:
4. Asatryan V., Black Sea Horizon International Workshop "The Resource Efficiency and Environment - Black Sea Region Challenges"; Tbilisi, Georgia, 22 March 2016.

5. Asatryan V., The 8th Eastern European Young water professionals conference, Gdansk, University of Technology, Poland, 12-14 May 2016.
6. Asatryan V., The 7th Eastern European Young water professionals conference, Belgrad, Serbia, 15-17 September 2015.
7. Asatryan V., “Twinning scheme to support EaP NCP activities” conference; Rome, Italy, 11-13 April 2016.
8. Suvaryan S., TEMPUS SUTOMA PROJECT, Willhelmshafen, Worms, Hamburg, Riga, Tbilisi scientific research meetings.

Գիտակրթական այլ գործունեություն

Ս. Սուվարյանը նաև ԵՊՀ սերվիսի ամբիոնի վարիչն է: Հաշվետու ժամանակամիջոցում նա ղեկավարել է դրամաշնորհներ «TEMPUS», Կրթության ծրագրերի իրականացման գրասենյակի և «UNEP Environment project WFTGA»-ի ծրագրերի շրջանակներում: Գ. Ալեքսանյանի մասնակցությամբ կազմակերպել է միջազգային գիտաժողովներ ԵՊՀ-ում, ինչպես նաև էկոնոմիկայի նախարարության հետ համատեղ՝ Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության վերապատրաստման դասընթացներ: Գ. Ալեքսանյանը կազմակերպել է «Destination management» դասընթացը (Ծաղկաձոր, 18-22.01.2016), մասնակցել «Կայուն տուրիզմի կառավարման ոլորտում միջազգային բակալավրական և մագիստրոսական ծրագրերի նոր մոդուլների մշակում» («SuToMa») ու «Սև ծովի մերձափնյա երկրներում կեղտաջրերի մաքրման կառույցների արդյունավետության շարունակական կատարելագործման ռազմավարություն» («CISWastewater») դրամաշնորհային ծրագրերին, ինչպես նաև ագրոտուրիզմի հիմնախնդիրներին նվիրված (Թբիլիսի, 01-05.06.2016), կայուն զարգացման մագիստրոսական ծրագրերի զարգացման (Վորմս, ԳԴՀ, 20-24.09.2015) և միջմշակութային հաղորդակցման (Վիլհելմշավեն, ԳԴՀ, 15-28.09.2015) համար նախատեսված վերապատրաստումներին:

Վ. Ասատրյանը 2015 թ. մասնակցել է «Introduction to geospatial technology using QGIS» (Del Mar College), «Tourism industry analyses» (UCF) և «Introduction to geographical information systems» (GIS) summer 2015 MOOC (University of West Florida) առցանց դասընթացներին: Նա նաև դասավանդել է «The patterns of ecotourism organizing and sustainable development», «Ecotourism organizing issues and development perspectives» և «Issues of ecotourism organizing and sustainable

development» երիտասարդ գիտնականների դպրոցներում, հիդրոկեն-սաբանական փորձագիտական ծառայություններ է մատուցել «The study of reproduction ecology of endangered endemic fish species Sevan Trout» (Rufford Small grant) և «The estimation of production possibilities and resource potential of river crayfish of Belarusian and Armenian water reservoirs» (SCS MES RA, joint Armenian - Belarusian research project №13РБ-061) ծրագրերում:

Պարգևներ

1. ՀՀ ԿԳՆ պատվոգիր (Փ. Դավթյան, 20.05.2016)
2. ԵՊՀ ոսկե մեդալ (Ս. Սուվարյան, 20.05.2016)
3. ԵՊՀ պատվոգիր (Վ. Ասատրյան, 20.05.2016)
4. ԵՊՀ պատվոգիր (Գ. Ալեքսանյան, 20.05.2016)

4. Ինֆորմատիկայի ամբիոն

Ամբիոնի վարիչ՝ ֆ.մ.գ.թ. Արսեն Դարբասյան

Ուսուցիչներ՝ տ.գ.թ. Կարինե Դեղոյան, ֆ.մ.գ.թ. Արմեն Անդրեասյան, Մերի Ղազարյան, Ռուզաննա Արշակյան, Սոս Աղամիրյան

Մասնակցություն հանրապետական համաժողովի

Ղազարյան Մ., Հանրակրթական ուսումնական հաստատության գործունեության ներքին գնահատման սկզբունքները, Երևան, 7-8 հունիսի, 2016 թ.

Պարգևներ

1. ՀՀ ԿԳՆ պատվոգիր (Կ. Դեղոյան, 20.05.2016)
2. ԵՊՀ պատվոգիր (Մ. Ղազարյան, 20.05.2016)

Գիտակրթական այլ գործունեություն

Ամբիոնի վարիչ Ա. Դարբասյանն աշխատել է նաև ՀԱՊՀ-ում և հաշ-վետու ուստարում մասնակցել է Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի դրամաշնորհային ծրագրերին:

5. Կենսաբանության ամբիոն

Ամբիոնի վարիչ՝ կ.գ.թ. Լևոն Ասատրյան

Ուսուցիչներ՝ Արփինե Հարությունյան, Գոհար Խաչատրյան, Էմմա Բարսեղյան

Հրատարակած գիտական աշխատանք

Մելքոնյան Է.Ս., Բարսեղյան Է.Ա., Թեմայի ամփոփումը որպես սովորողների ինքնուրույնության, կարողությունների և հմտությունների զարգացման միջոց, Բնագետ, 2015, թ. 2, էջ 17-24:

Պարգևներ

1. ՀՀ ԿԳՆ ոսկե հուշամեդալ (Գ. Խաչատրյան, 20.05.2016)
2. ԵՊՀ պատվոգիր (Ա. Հարությունյան, 20.05.2016)

6. Մաթեմատիկայի ամբիոն

Ամբիոնի վարիչ՝ ֆ.մ.գ.թ., դոց. Սմբատ Շահինյան

Ուսուցիչներ՝ ֆ.մ.գ.թ. Արման Կարապետյան, ֆ.մ.գ.թ., դոց. Միեր Մարտիրոսյան, ֆ.մ.գ.թ. Սմբատ Գոգյան, ֆ.մ.գ.թ. Ցոլակ Թերջյան, բ.գ.թ. Ալլա Սարգսյան, Ազնիվ Քարամյան, Աղասի Մանուչարյան, Արմինե Հովհաննիսյան, Արտակ Աֆյան, Արփինե Բաբայան, Էմմա Մարտիրոսյան, Ռուզաննա Մելքոնյան, Տաթևիկ Վասիլյան

Հրատարակած գիտական աշխատանքներ՝

1. Շահինյան Ս.Գ., Մաթևոսյան Ա.Գ., Սիմոնյան Թ.Ա., Տեսական մեխանիկա: Կուրսային աշխատանքների կատարման մեթոդական ցուցումներ, Երևան, ԵՊՀ հրատ., 2016, 100 էջ:
2. Karapetyan A.H. On a new family of weighted integral representations of holomorphic functions in the unit ball of C^n, Proceedings of International Conference “Harmonic

Analysis and Approximations 6", Armenia, Tsaghkadzor, 12-18 September, 2015, pp. 44-46.

3. Karapetyan A.H. Weighted integral representations in tube domain over real unit ball, Sarajevo Journal of Mathematics, vol. 12, no. 1 (2016), pp. 69-82.
4. Shahinyan S.G. Force Structure Effect on the Stability of Motion Under Integrally Small Perturbations. Journal of Mathematical sciences, Vol. 210, № 3, 2015, pp. 281-291.
5. Shahinyan S.G., Rezai M. The Problem of the Optimal Stabilization of the Spinning Top Motion. Mechanics. Proceedings of National Academy of Sciences of Armenia, V. 69 (1), 2016, pp. 66-75.

Զեկուցում միջազգային գիտաժողովում՝

Karapetyan A. On a new family of weighted integral representations of holomorphic functions in the unit ball of C^n, International Conference "Harmonic Analysis and Approximations 6", Armenia, Tsaghkadzor, 12-18 September, 2015.

Մասնակցություն հանրապետական սեմինարի՝

Շահինյան Ս., Պետական կրթակարգի և չափորոշիչների վերանայման կարիքների գնահատման հետազոտության արդյունքների ներկայացման աշխատաժողով, Ծաղկաձոր, 2016 թ. մարտի 11-12:

Պարգևներ

1. ՀՀ ԿԳՆ պատվոգիր (Ա. Մանուչարյան, 20.05.2016)
2. ՀՀ ԿԳՆ պատվոգիր (Ա. Քարամյան, 20.05.2016)
3. ՀՀ ԿԳՆ պատվոգիր (Ռ. Մելքոնյան, 20.05.2016)
4. ԵՊՀ ոսկե մեդալ (Ս. Շահինյան, 20.05.2016)
5. ԵՊՀ պատվոգիր (Ա. Կարապետյան, 20.05.2016)

7. Նախնական զինվորական պատրաստության և ֆիզկուլտուրայի ամբիոն

Ամբիոնի վարիչ՝ Արտյոմ Միլիտոնյան

Ուսուցիչներ՝ փոխգնդապետ Եղիշ Ներսիսյան, մայոր Պավել Ասիլյան, Ավետիք Աղամիրյան, Դավիթ Կարապետյան

8. Պատմության ամբիոն

Ամբիոնի վարիչ՝ Եվգենյա Ղալումյան

Ուսուցիչներ՝ պ.գ.թ. Արաքսյա Սիմոնյան, պ.գ.թ. Սեդրակ Սիմոնյան, պ.գ.թ., ասիստ. Միքայել Մալխասյան, Ալբինա Հարությունյան, Նարինե Զոհրաբյան, Սուրեն Պապիկյան

Հրատարակած գիտական աշխատանքներ

1. Մալխասյան Մ., Ժողովրդագրական գործընթացների միտումները և առանձնահատկությունները Հայաստանում ԺԶ դարում, «Էջմիածին», 2016, թիվ Դ, էջ 52-72:
2. Մալխասյան Մ., Ժողովրդագրական գործընթացների միտումները և առանձնահատկությունները Հայաստանում XVII դարի առաջին կեսին, «Հայագիտության հարցեր» հանդես, Երևան, 2016, թիվ 1 (7), էջ 94-104:
3. Մալխասյան Մ., Կարսի մարզի բնակչությունը (1877-1917 թթ.), Երևան, ԵՊՀ հրատ., 2015, 80 էջ:
4. Մալխասյան Մ., Մեծ Հայքը Կլավդիոս Պտղոմեոսի «Աշխարհագրության» համակարգում, «Էջմիածին», 2015, թ. Բ, էջ 29-45:
5. Մալխասյան Մ., Մեծ Հայքը Կլավդիոս Պտղոմեոսի «Աշխարհագրություն» երկում, «Քրիստոնյա Հայաստան», 2015, թ. 22, էջ 5, 7, թ. 23, էջ 6, թ. 24, էջ 5, 7, 2016, թ. 1, էջ 6, թ. 2, էջ 6, 7, թ. 3, էջ 7, 11, թ. 4, էջ 6, թ. 5, էջ 3, 5:
6. Մալխասյան Մ., Պատմաժողովրդագրական ուսումնասիրություններ. գիտական հոդվածների ժողովածու, գիրք 1, Երևան, ԵՊՀ հրատ., 2015, 248 էջ:

7. Մալխասյան Մ., Օտար էթնիկական ներթափանցումները Հայաստան 16-րդ դարում, «Պատմություն և մշակույթ», Երևան, 2016, էջ 140-149:
8. Малхасян М., Оганесян А., Саакян В., Современный город – перекресток культур и пространство для межкультурного диалога, в учебном пособии «Перекресток культур. Страны Черноморского региона и общественно-политические изменения в XIX–XX вв.», Ереван, EUROCLIO, 2015, с. 355-367. (լույս է տեսել նաև հայերեն թարգմանությամբ)
9. Малхасян М., Оганесян А., Саакян В., Современный город – перекресток культур и пространство для межкультурного диалога, в пособии для учителя «Перекресток культур. Страны Черноморского региона и общественно-политические изменения в XIX–XX вв.», Ереван, EUROCLIO, 2015, с. 156-158. (լույս է տեսել նաև հայերեն թարգմանությամբ)

Պարգևներ

1. ԵՊՀ ոսկե մեդալ (Մ. Մալխասյան, 25.04.2016)
2. ԵՊՀ պատվոգիր (Ս. Սիմոնյան, 20.05.2016)

9. Ռուսաց լեզվի ամբիոն

Ամբիոնի վարիչ՝ մ.գ.թ., դոց. Սվետլանա Սամուելյան

Ուսուցիչներ՝ բ.գ.թ. Արթուր Աբգարյան, Խաչատուր Պետրոսյան, Կարինե Կանաչյան, Մարինե Սարգսյան, Սուսաննա Ադամյան, Փառանձեմ Ձանյան

Հրատարակած գիտական աշխատանքներ

1. Սարգսյան Մ., Եղեռնի պատկերը Երվանդ Օտյանի «Թիվ 17 խաֆիեն» վեպում և «Անիծյալ տարիներ» հուշագրության մեջ, «ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու», 2016, 1.7 (17), հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված գիտաժողովի նյութեր, էջ 62-67:

2. Аракелян Н., Эйрамджянц А., Самуэлян С., Русский язык. Учебник для шестого класса средней общеобразовательной школы, Ереван, 2015. – 224 с.
3. Саргсян М., Лермонтов и Пастернак: разные аспекты литературного влияния, «Сборник научных статей ЕГУ СНО», 2016, 1.3 (13), с. 121-126.

Զեկուցում հանրապետական գիտաժողովում

С. Самуэлян., К вопросу о лингвистических особенностях общения в блогах/ Доклад на II Международной научно-практической конференции преподавателей, студентов, магистрантов и аспирантов Армении, России и других стран СНГ «Русский язык как средство реализации межпредметных связей в современной парадигме образования»/ ЕГУЯСН им. В.Я. Брюсова, 19-23 октября 2015 г..

Գիտակրթական այլ գործունեություն

Ամբիոնի վարիչ Ս. Սամուելյանը, համատեղելով աշխատանքը Վ. Բրյուսովի անվան ԵՊԼՀ հետ, մասնակցել է imdproc.am ուսումնական պորտալի նյութերի պատրաստման աշխատանքներին: Նա 2015 թ. ամբողջացրել է ՈԴ ԿԳՆ ծրագրի շրջանակներում կազմակերպված ռուսաց լեզվի դասընթացների շարք և Մոսկվայում վերապատրաստվել «Современные аспекты преподавания русского языка как неродного, русской литературы и культуры» ծրագրով:

Խ. Պետրոսյանը մասնակցում է «Կրթության գերազանցության ազգային ծրագրի» որակավորման դրամաշնորհային դասընթացներին:

Պարգև

ԵՊՀ պատվոգիր (Խ. Պետրոսյան, 20.05.2016)

10. Քիմիայի ամբիոն

Ամբիոնի վարիչ՝ Վիտուշ Սարգսյան

Ուսուցիչներ՝ Հեղինե Գալստյան, Էմմա Բարսեղյան, Անահիտ Ասրյան

Պարգևներ

1. ՀՀ վաստակավոր մանկավարժի կոչում (Վ. Սարգսյան, 21.09.2015)
2. ԵՊՀ պատվոգիր (Հ. Գալստյան, 20.05.2016)

11. Ֆիզիկայի ամբիոն

Ամբիոնի վարիչ՝ Մաելս Ազիզբեկյան

Ուսուցիչներ՝ ֆ.մ.գ.թ., դոց. Իշխան Հարությունյան, Բելլա Դավթյան, Գրիգոր Աղաբաբյան, Լիլիա Մանուկյան, Լիլիթ Հովհաննիսյան, Լուսինե Վարդանյան

Հրատարակած գիտական աշխատանքներ

1. Gevorgyan V., Harutyunyan V., Alexanyan H., Hovhannisyan R., Harutyunyan I., Nonlinear optical properties of $Zn_4B_6O_{13}$, Book of Abstracts Int. Conf. Laser Physics, Ashtarak, 2015, p. 43.
2. Gevorgyan V., Harutyunyan V., Harutyunyan I., Non-linear optical properties newel materials by second harmonic generation, Abstracts of 3rd Int. Advanced School FOP 2016, Yerevan-Ashtarak, 2016.
3. Harutyunyan V.G., Gambaryan K.M., Aroutiounian V.M., Harutyunyan I.G. InAsSbP quantum dot mid-IR photodetectors operating at room temperature, Infrared Physics & Technology, 2015, Vol. 70, pp. 12-14.
4. Harutyunyan V.G., Gambaryan K.M., Aroutiounian V.M., Harutyunyan I.G. Investigation of InAsSbP quantum dot mid-infrared sensors, J. Sens. Sens. Syst., 2015, 4, pp. 249-253.

Զեկուցումներ միջազգային գիտաժողովներում

1. Gevorgyan V., Harutyunyan V., Alexanyan H., Hovhannisyan R., Harutyunyan I., Nonlinear optical properties of $Zn_4B_6O_{13}$, IPR, Ashtarak, Armenia, Oct. 2015.
2. Gevorgyan V., Harutyunyan V., Harutyunyan I., Non-linear optical properties newel materials by second harmonic generation, 3rd Int. Advanced School FOP 2016, Yerevan-Ashtarak, Armenia, 29 Feb. – 11 March 2016.

Պարգև
ՀՀ ԿԳՆ պատվոգիր (Ի. Հարությունյան, 20.05.2016)

12. Տարրական դպրոց

«Քվանտ» վարժարանում 2014 թ. բացվել է տարրական դպրոց, որի շրջանակներում հաշվետու ուստարում գործել են երկուական 1-ին և 2-րդ դասարաններ: Դասվարներն են Ձվարթ Դանիելյանը, Լուսինե Ղալումյանը, Հեղինե Պարոնյանը, Նելլի Մարտիրոսյանը, Նունե Սարուխանյանը, Սոսե Չախալյանը, երգի և երաժշտության ուսուցչուհին՝ Աննա Վիրաբյանը:

Տարրական դպրոցի շրջանակներում կազմակերպվել են հետևյալ միջոցառումները.

- «Հայոց պահապան զինվորը եռագույն դրոշի հետ»,
- «Իմ ուսուցիչը»,
- «Ոսկեհանդերձ աշուն»,
- «Դիմակահանդես»,
- «Ձմեռ»,
- «Հովհաննես Թումանյանի հեքիաթները»,
- «Դռները բացեք, գարուն է գալիս»,
- «Իմ մայրիկը»,
- «Սուրբ Ձատիկ»,
- «Նկարիր երաժշտությունը»,
- «Հայոց այբուբենը»,
- «Գիտելիքի տոն»,
- «Ուսուցչի տոն»,
- «Ամանորի հանդես»,
- «Թումանյանական շաբաթ»,
- «Հրաժեշտ Այբբենարանին»:

Տարրական դասարանների սաներն իրենց երաժշտական կատարումներով մասնակցել են նաև «Փնտրում ենք տաղանդներ» համերգային մրցույթ-փառատոնին և վարժարանի հիմնադրման 25-ամյակին նվիրված հանդիսությանը ԵՊՀ մեծ դահլիճում:

13. Սոցիալ-հոգեբանական ծառայություն

«Քվանտ» վարժարանի սոցիալ-հոգեբանական ծառայության ղեկավարն է Ելենա Բարտենևան, որին աջակցում է աշխատակից Մարի Ամիրխանյանը:

Սոցիալ-հոգեբանական ծառայությունը պարբերաբար իրականացրել է դասալսումներ, ծնողական և աշակերտական հարցումներ ու անհատական խորհրդատվություններ, ԵՊՀ և ՀՊՄՀ հոգեբանության և սոցիալական մանկավարժություն բաժինների ուսանողների պրակտիկայի կազմակերպում վարժարանում: Կատարվել է խորհրդատվությունների և հարցումների արդյունքում վերհանված խնդիրների մանրակրկիտ վերլուծություն, ստացված տվյալների համակարգում և լուծման հնարավոր տարբերակների առաջքաշում:

Ծառայության ղեկավար Ե. Բարտենևան ՄԲ «Դիպլոմա» ծրագրով դասավանդում է «Հոգեբանություն» առարկան:

Ծառայության ջանքերով կազմակերպվել են ավելի քան 20 միջոցառումներ: 2015 թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին 5-6-րդ դասարաններում անցկացվել են խմբային աշխատանքի կազմակերպման, 7-8-րդ դասարաններում՝ ժամանակի արդյունավետ կառավարման, իսկ 9-10-րդ դասարաններում՝ մասնագիտական կողմնորոշման համար նախատեսված միջոցառումներ: Նույն աշխատանքները շարունակվել են նաև երկրորդ կիսամյակում:

Վարժարանի ուսուցիչների համար կազմակերպվել են հոգեբանական սեմինար-դասընթացներ «Կրթության նորարարություն» և «Շփման կոմպետենտություն» թեմաներով:

Վարժարանի 25-ամյա հոբելյանին նվիրված միջոցառումների շրջանակում 2016 թ. հունիսին կազմակերպվել է ստեղծագործական խնդիրների լուծման տեսության (ТРИЗ) մասին վեբինար, որն անցկացրել է էքսպերտ-խորհրդատու, մանկավարժության մասնագետ Անատոլի Գինը:

2016 թ. հուլիսի 16-18-ը ծառայության գործուն մասնակցությամբ կազմակերպվել է վարժարանի ուսուցիչների ամենամյա հաշվետու սեմինարն Աղավնաձորի ամառային ճամբարում: Օգոստոսին վարժարանի հիմնական դպրոցի ուսուցչական կազմի համար անցկացվել է ավանդական դարձած հոգեբանական թրեյնինգ:

ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

«Քվանտ» վարժարանում անցկացվող համավարժարանային միջոցառումների կազմակերպման գործում իր մասնակցությամբ անմասն չի մնում ծնողական խորհուրդը:

Ծնողխորհրդի ակտիվ ներգրավմամբ են տեղի ունեցել Առաջին զանգին (01.09.2015) և Վերջին զանգին (26.05.2016) նվիրված միջոցառումները, «Էթնիկ էքսպո – 2015» (28-29.12.2015) և «Փնտրում ենք տաղանդներ» (19.02-04.03.2016) մրցույթ-փառատոնները, վարժարանի հիմնադրման 25-ամյակին նվիրված հիմնական միջոցառումները (05-20.05.2016), դեպի Աղավնաձոր արշավները (2015 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր), ՀՀ տեսարժան վայրեր, պատմաճարտարապետական հուշարձաններ ու թանգարաններ էքսկուրսիաները, դասղեկների կողմից կազմակերպվող տարաբնույթ միջոցառումները:

Վարժարանի ուսումնադաստիարակչական, կազմակերպական և ֆինանսատնտեսական տարբեր հարցերի շուրջ քննարկումներ են ծավալվել ծնողական ժողովների ժամանակ: Խնդիրները մանրամասնորեն քննարկվել են տնօրենության կողմից և արժանացել համապատասխան լուծման:

Ծնողների, սոցիալ-հոգեբանական ծառայության և դասղեկների նախաձեռնությամբ հաճախ կազմակերպվել են դասարանական կամ անհատական աշակերտական խնդիրների առանձին քննարկումներ, որոնք օգտակար են եղել ծառացած խնդիրների հաղթահարման գործում:

ԱՇԱԿԵՐՏՆԵՐ

(ընդհանուր ցուցանիշներ)

«Քվանտ» վարժարանում հաշվետու ուստարում սովորել է 614 աշակերտ, որոնցից 87-ը՝ տարրական, 320-ը՝ միջին, 207-ը՝ ավագ դպրոցի հոսքային և ՄԲ դասարաններում: Չեն գործել 3-րդ և 4-րդ դասարանները, քանի որ տարրական դպրոցը վարժարանում գործում է 2014-2015 ուստարվանից:

25-ամյա գոր ունեության ընթացքում վարժարանը տվել է ավելի քան 2300 շրջանավարտ, որից հաշվետու ուստարում՝ 83:

Գրաֆիկ 1. Վարժարանի աշակերտների թիվը՝ ըստ դասարանների



2015-2016 ուստարվա շրջանավարտների տարեկան միջին գնահատականը հայոց լեզվից կազմել է 8.3, մաթեմատիկայից՝ 8.8, հայոց պատմությունից՝ 8.9, բնագիտական առարկաներից (ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, աշխարհագրություն)՝ 8.2:

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

«Քվանտ» վարժարանի հիմնադրման տարվանից սկսած կրթօջախում գործել է աշակերտների ներկայացուցչական մարմին՝ Ավագների խորհուրդ: Այն 2010 թ. վերակազմավորվել է Աշակերտական խորհրդի, որի կազմում ներառված են տարբեր դասարաններից ընտրված անդամներ:

Աշխորհրդի կողմից կազմակերպված միջոցառումները վարժարանի առօրյայի անբաժան մասն են: Նրա կողմից ընտրված ներկայացուցիչները մասնակցում են նաև վարժարանի գիտամանկավարժական խորհրդի նիստերի աշխատանքներին:

Աշխորհրդի նախագահը 10-րդ դասարանի աշակերտ Կարլեն Ավագյանն է, իսկ նախագահի տեղակալները՝ 10-րդ դասարանի աշակերտուհի Սերինե Նազարյանը և 9-րդ դասարանի աշակերտուհի Մարտա Մովսեսյանը:

Աշակերտական խորհուրդը 2015-2016 ուսումնական տարում իր անդրանիկ նիստը գումարել է 2015 թ. հոկտեմբերի 8-ին: Ներկայացվել են 2014-2015 ուստարվա հաշվետվությունը և 2015-2016 ուստարվա աշխատանքային պլանը:

Աշխորհրդի կողմից հաշվետու ուստարում կազմակերպվել են հետևյալ միջոցառումները.

- Բասկետբոլի առաջնություն (09-30.11.2015),
- վարժարանի հարակից տարածքների մաքրման շաբաթօրյակ (14.11.2015)
- Հարցազրույցներ տարրական դպրոցի սաների հետ (24.11.2015, 06.12.2015),
- Սպիտակի երկրաշարժի 27-րդ տարելիցի կապակցությամբ պաստառների պատրաստում (07.12.2015),
- Այցելություն Եռաբլուր (28.01.2016),
- Մարտիրոս Սարյանի ծննդյան օրվան նվիրված նկարչական-երաժըշտական մրցույթ (29.02.2016),
- հին մասնաշենքի պատերին փակցնելու համար նոր պաստառների պատրաստում (01-31.03.2016),
- վարժարանի հարակից տարածքների մաքրման շաբաթօրյակ (09.04.2016)

- Այցելություն Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված Ծիծեռնակաբերդի հուշահամալիր (24.04.2016),
- Արցախին աջակցելու համար դրամահավաք (09-16.04.2016),
- Արցախյան քառօրյա մարտերում զոհված Քյարամ Սլոյանի ընտանիքին օգնելու համար դրամահավաք (19.04.2016),
- Վոլեյբոլի առաջնություն (04-25.05.2016):

Աշակերտական խորհուրդն աջակցել է նաև տնօրենության կողմից կազմակերպված հետևյալ միջոցառումների իրականացմանը.

- Առաջին զանգի արարողություն (01.09.2015),
- «Էթնիկ էքսպո – 2015» մրցույթ-փառատոն (28-29.12.2015),
- Վերջին զանգի արարողություն (26.05.2016),
- «Փնտրում ենք տաղանդներ» մրցույթ-փառատոն (19.02-04.03.2016),
- Վարժարանի հիմնադրման 25-ամյակին նվիրված կարևոր-ագույն միջոցառումներ (05-20.05.2016):

ԱՎԱՐՏԱԿԱՆ ԵՎ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԲՈՒՀԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու ուստարում «Քվանտ» վարժարանի 83 շրջանավարտներից բոլորը հանձնել են պետական ավարտական քննություններ և ստացել պետական նմուշի ատեստատ: Շրջանավարտներից 45-ը հանձնել են միասնական քննություններ՝ հավաքելով հանրապետական միջինից ավելի բարձր միավորներ (տե՛ս Աղ. 1 և Աղ. 2): Առաջին անգամ 3 աշակերտներ ստացել են անբավարար գնահատական:

ՄԲ «Դիպլոմա» ծրագրի շրջանավարտները հրավերներ են ստացել Օքսֆորդի, էդինբուրգի, Կալիֆոռնիայի (Բերկլի) համալսարաններից, Լոնդոնի կայսերական ու համալսարանական քոլեջներից և այլ առաջատար բուհերից: Հոսքային դասարանների շրջանավարտներից 67-ն ընդունվել են ՀՀ բուհեր (տե՛ս Աղ. 3), ընդ որում՝ նրանցից 16-ն ուսանելու են պետպատվերի շրջանակներում:

Աղյուսակ 1. Վարժարանի աշակերտների՝ միասնական քննությունների միջին գնահատականները

Առարկա	2014-2015 ուս.տ.		2015-2016 ուս.տ.	
	Վարժ.	ՀՀ	Վարժ.	ՀՀ
Հայոց լեզու և գրականություն	16.4	13.7	14.6	13.36
Անգլերեն	17.2	14.2	15.4	14.18
Կենսաբանություն	17.9	12.6	18.8	13.31
Հայոց պատմություն	14.4	13	13.5	13.36
Մաթեմատիկա	15.9	11.8	15.7	11.76
Քիմիա	15.6	12.6	19	13.28
Ֆիզիկա	16.6	10.9	17.2	13.31

Աղյուսակ 2. Վարժարանի՝ միասնական քննություններին մասնակից աշակերտների թիվը և միջին գնահատականները 2015-2016 ուստարում

Առարկա	Մասնակիցների թիվը	Միջ. գնահատ.
Հայոց լեզու	15	14.6

Անգլերեն	24	15.4
Կենսաբանություն	7	18.8
Հայոց պատմություն	6	13.5
Մաթեմատիկա	27	15.7
Քիմիա	5	19
Ֆիզիկա	15	17.2

Աղյուսակ 3. Վարժարանի՝ ՀՀ պետական և ոչ պետական բուհեր ընդունված շրջանավարտների թիվը 2015-2016 ուստարում՝ ըստ բուհերի

	Բուհ	Վարժարանից ընդունված շրջանավարտների թիվը 2015-2016 ուստարում
1	Երևանի պետական համալսարան	31
2	Հայաստանում Ամերիկյան համալսարան	17
3	Երևանի պետական բժշկական համալսարան	6
4	Հայաստանում Ֆրանսիական համալսարան	4
5	Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարան	3
6	Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան	2
7	Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիա	2
8	Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան	1
9	Երևանի պետական լեզվաբանական համալսարան	1

ՕԼԻՄՊԻԱԴԱՆԵՐ ԵՎ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՍՏՈՒԳԱՏԵՍՆԵՐ

«Քվանտ» վարժարանի 614 աշակերտներից 199-ը մասնակցել են դպրոցականների առարկայական օլիմպիադայի՝ Երևանի քաղաքային (մարզային) փուլին, որոնցից 59-ն անցել են հանրապետական փուլ՝ արժանանալով 1-ին, 2-րդ և 3-րդ կարգի դիպլոմների: Նրանցից 43-ը հանրապետական փուլում արժանացել են դիպլոմների և գովասանագրերի:

Վարժարանի 12 աշակերտներ մասնակցել են միջազգային օլիմպիադաներին (2-ը՝ ֆիզիկայի, 1-ական՝ աստղագիտության, ինֆորմատիկայի, կենսաբանության և աշխարհագրության, 6-ը՝ ժաուտիկովյան), և նրանցից 8-ն արժանացել են մեդալների (վիճակագրությունը տե՛ս Աղ. 4, 5, 6 և 7):

Աղյուսակ 4. 2015-2016 ուստարում վարժարանից դպրոցականների առարկայական օլիմպիադաների մարզային և հանրապետական փուլերի մասնակիցների թիվը

Առարկա	Մարզային	Հանրապետական
Հայոց լեզու	12	2
Հայ գրականություն	9	2
Ռուսաց լեզու	11	1
Անգլերեն	12	3
Աշխարհագրություն	19	7
Պատմություն	10	2
Մաթեմատիկա	26	14
Ֆիզիկա	31	10
Ինֆորմատիկա	20	8
Քիմիա	7	2
Կենսաբանություն	18	2
Աստղագիտություն	7	3
ՆԶՊ	8	2
Հայոց եկեղեցու պատմություն	9	1
Ընդամենը	**199**	**59**

Աղյուսակ 5. 2015-2016 ուստարում Երևանի քաղաքային օլիմպիադայում վարժարանի մրցանակակիրները

	Աշակերտ	Դաս.	Դիպլոմ	Առարկա
1	Մոսոյան Աննա	9	I	Անգլերեն
2	Վարդանյան Վարդան	9	I	Աշխարհագրություն
3	Գրիգորյան Արեգ	9	I	Ֆիզիկա
4	Մանուկյան Լուսյա	12	I	Անգլերեն
5	Խալաֆյան էդվարդ	12	I	Ֆիզիկա
6	Մոսոյան Աննա	9	II	Աշխարհագրություն
7	Երանոսյան Վահան	8	II	Ֆիզիկա
8	Արդիալջյան Արտավասդ	10	II	Անգլերեն
9	Կարալյան Ալեքսանդր	10	II	Կենսաբանություն
10	Կարալյան Ալեքսանդր	10	II	Մաթեմատիկա
11	Կարալյան Ալեքսանդր	10	II	Ֆիզիկա
12	Միքաելյան Համլետ	11	II	Ինֆորմատիկա
13	Խալաֆյան էդվարդ	12	II	Աստղագիտություն
14	Մաթևոսյան Աշոտ	12	II	Աստղագիտություն
15	Աբրահամյան Սևակ	12	II	Մաթեմատիկա
16	Վրթանեսյան Արեգ	12	II	Մաթեմատիկա
17	Գևորգյան էդուարդ	12	II	Քիմիա
18	Մաթևոսյան Աշոտ	12	II	Ֆիզիկա
19	Գրիգորյան Արեգ	9	III	Աստղագիտություն
20	Մկրտչյան Նատալյա	9	III	Հայ գրականության
21	Մկրտչյան Նատալյա	9	III	Հայոց լեզու
22	Ենգիբարյան Հասմիկ	8	III	Աշխարհագրություն
23	Հովսեփյան Սիփան	8	II	Աշխարհագրություն
24	Կարախանյան Տիգրան	8	III	Կենսաբանություն
25	Մկրտչյան Գոռ	10	III	Աշխարհագրություն
26	Ստեփանյան Հասմիկ	10	III	Աշխարհագրություն
27	Աթաբեկյան Աննա	10	III	ՆԶՊ
28	Ավագյան Կարլեն	10	III	ՆԶՊ
29	Նազարյան Սերինե	10	III	Ռուսաց լեզու
30	Թովմասյան Վահե	11	III	Աշխարհագրություն
31	Անդրեասյան Մեսրոպ	11	III	Ինֆորմատիկա
32	Մարտիրոսյան Վիկտորյա	11	III	Հայ գրականության
33	Մարտիրոսյան Վիկտորյա	11	III	Հայոց եկեղ. պատմ.
34	Մելքոնյան Մադլենա	11	III	Հայոց լեզու
35	Մարտիրոսյան Վիկտորյա	11	III	Պատմություն
36	Ավետիսյան Դիանա	11	III	Քիմիա

37	Աբրահամյան Սևակ	12	III	Ինֆորմատիկա
38	Ասատրյան Սամվել	12	III	Ինֆորմատիկա
39	Մաթևոսյան Աշոտ	12	III	Ինֆորմատիկա
40	Մաթևոսյան Արմեն	12	III	Ինֆորմատիկա
41	Մաթևոսյան Աշոտ	12	III	Մաթեմատիկա
42	Հովսեփյան Ներսես	12	III	Պատմություն

Աղյուսակ 6. 2015-2016 ուստարվա հանրապետական օլիմպիադայում վարժարանի մրցանակակիրները

	Աշակերտ	Դաս.	Մրց.	Առարկա
1	Կարալյան Ալեքսանդր	10	I	Կենսաբանություն
2	Գրիգորյան Արեգ	9	I	Ֆիզիկա
3	Վարդանյան Վարդան	9	I	Աշխարհագրություն
4	Թովմասյան Վահե	11	I	Աշխարհագություն
5	Աթարբեկյան Աննա	10	I	ՆԶՊ
6	Խալաֆյան Էդվարդ	12	I	Աստղագիտություն
7	Մաթևոսյան Աշոտ	12	I	Աստղագիտություն
8	Մանուկյան Լուսյա	12	I	Անգլերեն
9	Միքաելյան Համլետ	11	I	Մաթեմատիկա
10	Կարախանյան Տիգրան	8	II	Մաթեմատիկա
11	Կարալյան Ալեքսանդր	10	II	Մաթեմատիկա
12	Աբրահամյան Սևակ	12	II	Մաթեմատիկա
13	Կարալյան Ալեքսանդր	10	II	Ֆիզիկա
14	Մաթևոսյան Աշոտ	12	II	Ինֆորմատիկա
15	Ազիզբեկյան Սարգիս	8	III	Մաթեմատիկա
16	Բեգջանյան Էրիկ	8	III	Մաթեմատիկա
17	Դալլաքյան Խաչատուր	8	III	Մաթեմատիկա
18	Երանոսյան Վահան	8	III	Ֆիզիկա
19	Խալաֆյան Էդվարդ	12	III	Ֆիզիկա
20	Մաթևոսյան Աշոտ	12	III	Ֆիզիկա
21	Մկրտչյան Նատալյա	9	III	Հայոց լեզու
22	Մոսոյան Աննա	9	III	Աշխարհագրություն
23	Արդիալջյան Արտավասդ	10	III	Անգլերեն
24	Միքաելյան Համլետ	11	III	Ինֆորմատիկա
25	Հովսեփյան Ներսես	12	III	Պատմություն
26	Ասատրյան Սամվել	12	Գ	Ինֆորմատիկա
27	Գևորգյան Էդուարդ	12	Գ	Քիմիա
28	Մաթևոսյան Արմեն	12	Գ	Ինֆորմատիկա
29	Վրթանեսյան Արեգ	12	Գ	Ինֆորմատիկա
30	Թերջյան Էրնեստ	8	Գ	Մաթեմատիկա

31	Կարախանյան Տիգրան	8	Գ	Կենսաբանություն
32	Սամվել Անդրեասյան	8	Գ	Ինֆորմատիկա
33	Գրիգորյան Արեգ	9	Գ	Աստղագիտություն
34	Նազարյան Սերինե	10	Գ	Ռուսաց լեզու
35	Մոսոյան Աննա	10	Գ	Անգլերեն
36	Մարտրիոսյան Վիկտորյա	11	Գ	Պատմություն
37	Անդրեասյան Մեսրոպ	11	Գ	Ինֆորմատիկա
38	Դումանյան Գևորգ	11	Գ	Մաթեմատիկա
39	Դումանյան Գևորգ	11	Գ	Ինֆորմատիկա
40	Եփրեմյան Սաթենիկ	11	Գ	Հայ գրականություն
41	Թովմասյան Վահե	11	Գ	Մաթեմատիկա
42	Հովսեփյան Ներսես	11	Գ	Հայ գրականություն
43	Մարտիրոսյան Վիկտորյա	11	Գ	Հայոց եկեղ. պատմ.

Աղյուսակ 7. 2015-2016 ուստարվա միջազգային օլիմպիադաներում վարժարանից մասնակիցները և մրցանակակիրները

	Աշակերտ	Օլիմպիադա	Մեդալ
1	Աշոտ Մաթևոսյան	Ֆիզիկայի ժաուտիկովյան	ոսկե
2	Աշոտ Մաթևոսյան	Ֆիզիկայի միջազգային	արծաթե
3	Էդվարդ Խալաֆյան	Ֆիզիկայի ժաուտիկովյան	բրոնզե
4	Սևակ Աբրահամյան	Մաթեմատիկայի ժաուտիկովյան	բրոնզե
5	Ալեքսանդր Կարալյան	Մաթեմատիկայի ժաուտիկովյան	բրոնզե
6	Ալեքսանդր Կարալյան	Կենսաբանության միջազգային	բրոնզե
7	Արեգ Գրիգորյան	Աստղագիտության միջազգային	բրոնզե
8	Համլետ Միքաելյան	Ինֆորմատիկայի ժաուտիկովյան	-
9	Աշոտ Մաթևոսյան	Ինֆորմատիկայի միջազգային	-
10	Վահե Թովմասյան	Աշխարհագրության միջազային	-
11	Էդվարդ Խալաֆյան	Ֆիզիկայի միջազգային	-
12	Արեգ Վրթանեսյան	Մաթեմատիկայի ժաուտիկովյան	-

ՌԴ Տնտեսագիտության բարձրագույն դպրոցի (համալսարանի) կողմից կազմակերպված միջազգային օլիմպիադայում մաթեմատիկա և կիրառական մաթեմատիկա առարկաներից վարժարանի աշակերտներն արժանացել են 2 հատ 1-ին, 6 հատ 2-րդ և 5 հատ 3-րդ կարգի դիպլոմների՝ ուսումն այդ բուհում առանց ընդունելության քննություններ հանձնելու շարունակելու իրավեր ստանալով:

Վարժարանի սաներն ակտիվորեն մասնակցել են ոչ միայն ՀՀ ԿԳՆ կողմից կազմակերպվող դպրոցականների առարկայական օլիմպիադային և միջազգային ստուգատեսներին, այլև ԵՊՀ և ՀՀ այլ բուհերի նախաձեռնած օլիմպիադաներին: Այսպես, ԵՊՀ օլիմպիադայում նրա սաներն արժանացել են 2 հատ 1-ին, 1 հատ 2-րդ, 2 հատ 3-րդ կարգի դիպլոմների և 5 գովասանագրերի, իսկ ՀԱՊՀ օլիմպիադայում՝ 1 հատ 2-րդ, 2 հատ 3-րդ կարգի դիպլոմների և 1 գովասանագրի: Ուսանողների հետ մրցապայքարում Համլետ Միքայելյանը զբաղեցրել է 7-րդ տեղը Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի կողմից կազմակերպված ինֆորմատիկայի օլիմպիադայում: Վարժարանի 3 աշակերտներ էլ մասնակցել են «Պատանի մաթեմատիկոս» օլիմպիական ստուգատեսին՝ արժանանալով մեկական 2-րդ և 3-րդ կարգի դիպլոմների:

Իրենց օլիմպիական և ուսումնական հաջողությունների համար ՏՏ բնագավառում ՀՀ Նախագահի ամենամյա մրցանակաբաշխությանը «Լավագույն աշակերտ» անվանակարգում 2015 թ. հաղթողների թվում են եղել ՄԲ «Դիպլոմա» ծրագրով ավարտական դասարանի աշակերտներ Լուսյա Մանուկյանը և Արման Ղազարյանը:

Վարժարանի աշակերտները սովորաբար մասնակցում են ոչ միայն ՀՀ ԿԳՆ և տարբեր բուհերի կողմից կազմակերպվող ու միջազգային օլիմպիադաներին, այլև վարժարանի կողմից կազմակերպվող առարկայական ստուգատես-օլիմպիադաներին: Հանրապետական բնույթ է կրում ամենամյա «Օժտված երեխաների մրցույթ» մաթեմատիկայի օլիմպիական մրցույթը, որը հնարավորություն է տալիս ՀՀ տարբեր դպրոցների աշակերտներին անվճար ընդունվելու վարժարան կամ պարզապես ստուգելու գիտելիքները և մաթեմատիկական տրամաբանությունը: Մրցույթի կազմակերպման գործում ներգրավվում են ԵՊՀ առաջատար մասնագետներ: Հաշվետու ուստարում մրցույթին մասնակցել են Երևանի և հանրապետության բոլոր մարզերի 82 դպրոցների 226 աշակերտներ, որոնցից 49-ն արժանացել են մրցանակների:

Արդեն հինգերորդ տարին շարունակ կազմակերպվում է ՀՀ աստղագիտության միջազգային օլիմպիական թիմի բազմամյա ղեկավար, ուսուցիչ Արմեն Օսկանյանի հիշատակին նվիրված ներվարժարանային օլիմպիադան 11 առարկաներից, որին մասնակցելու հնարավորություն է տրված նաև այլ դպրոցների աշակերտներին: Հաշվետու ուստարում օլիմպիադան տեղի է ունեցել 2015 թ. նոյեմբերի 29-ին և դեկտեմբերի 12-ին: Մասնակից 338 աշակերտներից 50-ն արժանացել են 1-ին, 60-ը՝ 2-րդ, 88-ը՝ 3-րդ կարգի դիպլոմների:

Վարժարանի աշակերտները ակտիվորեն մասնակցել են նաև «Կենգուրու» և նմանօրինակ համապետական այլ մրցույթների:

Վարժարանի ուսումնական գործընթացի անբաժան մասն են կազմում օլիմպիական անվճար խմբակների պարապմունքները, որոնց մասնակցում է վարժարանի միջին և ավագ դասարանների մոտ մեկ հինգերորդ մասը: Գործում են նաև տիեզերագիտական, մաթեմատիկական մոդելավորման, ինչպես նաև շախմատի, վոլեյբոլի և սպորտային այլ անվճար խմբակներ:

ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ ԵՎ ՄԻԶԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ

«Քվանտ» վարժարանը 2011 թ. իրականացնում է Միջազգային բակալավրիատի «Դիպլոմա» ծրագրով ուսուցում 11-րդ և 12-րդ մեկական դասարաններում: ՄԲ 5-ամյա անդամության արդյունավետության կարևորագույն ցուցիչն այն է, որ վարժարանի սաների ընդհանուր միջին քննական միավորը համաշխարհային միջինից բարձր է (տե՛ս Աղ. 8), ընդ որում՝ հաշվետու ուստարում վարժարանի 12-րդ դասարանի աշակերտուհի Լուսյա Մանուկյանը վաստակել է ՀՀ-ում առաջին առավելագույն ավարտական միավորը՝ 45 հնարավորից 45 միավոր:

Աղյուսակ 8. ՄԲ «Դիպլոմա» ծրագրի ավարտական քննությունների արդյունքները

	2013	2014	2015	2016
Հնարավոր առավելագույն միավորը	45	45	45	45
«Քվանտ»-ի աշակերտների առավելագույն միավորը	43	39	40	45
Համաշխարհային միջինը	29.8	29.8	30.2	30
«Քվանտ»-ի աշակերտների միջինը	35 ↑5.2	33 ↑3.2	34 ↑3.8	32 ↑2

ՄԲ շրջանակներում ունեցած ձեռքբերումների առանցքային ցուցանիշներից է առարկայական քննական աշխատանքների ստուգման միջազգային վկայագրով ուսուցիչների (IB examiners) համակազմի առկայությունը: 2015-2016 ուստարում նման վկայագրով աշխատանքներ են իրականացրել վարժարանի 9 ուսուցիչներ՝ Ալլա Սարգսյանը, Արսեն Դարբասյանը, Արփինե Հարությունյանը, Ելենա Բարտենևան, Իշխան Հարությունյանը, Կարինե Դեղոյանը, Միեր Մարտիրոսյանը, Սմբատ Շահինյանը, Վիտուշ Սարգսյանը:

Միջազգային գործընկերության կողքին վարժարանում շատ է կարևորվում գործընկերությունը ՀՀ հանրակրթական և բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ: Քառորդդարյա պատմություն ունի Երևանի պետական համալսարանի հետ համագործակցությունը, որի հետ մի քանի անգամ ստորագրվել են համագործակցության պայմանագրեր, իսկ շուրջ մեկ տասնյակ ուսուցիչներ համատեղում են աշխատանքը երկու հաստատություններում: Հաշվետու ուստարում կազ-

մակերպվել են ԵՊՀ դեղագիտության և քիմիայի, ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի, իրավագիտության, պատմության, տնտեսագիտության և կառավարման, ֆիզիկայի ֆակուլտետների դեկանների այց-դասախոսություններ վարժարանում, ինչպես նաև աշակերտների գործնական աշխատանքներ ԵՊՀ լաբորատորիաներում:

Վարժարանը գործող պայմանագրեր ունի նաև Հայաստանի պետական մանկավարժական համալսարանի և ՌԴ Տնտեսագիտության բարձրագույն դպրոցի (Национальный исследовательский университет «Высшая школа экономики») հետ:

2015-2016 ուստարվա ընթացքում վարժարանի գործընկեր հայկական և արտասահմանյան կազմակերպությունները հետևյալն են.

1. «Յունիքոմփ» ՓԲԸ (ՀՀ),
2. «Սինոփսիս Արմենիա» ՓԲԸ (ՀՀ),
3. «Ռ-ՏԵԼԵԿՈՄ» ՓԲԸ (ՀՀ),
4. «Կողբ» հիմնադրամ (ՀՀ),
5. ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատուն (ՀՀ),
6. ՏՀՏ գործատուների միություն (ՀՀ),
7. «Հայաստանի էլեկտրոնային գրադարաններ» կոնսորցիում (ՀՀ),
8. «Լեզուների տուն» ՍՊԸ (ՀՀ),
9. «ՎԵԲ» ՍՊԸ (ՀՀ),
10. «Լույս» հիմնադրամ (ՀՀ),
11. «Լոնդոն Այ» միջազգային ուսումնական կենտրոն (ՀՀ),
12. Logo Computer Systems (Կանադա),
13. Cambridge Admissions Testing Service (Մեծ Բրիտանիա),
14. “Global Flight” educational non-profit organization (ԱՄՆ),
15. Turnitin LLC (ԱՄՆ),
16. InThinking IB Resources (ԱՄՆ),
17. Компьютерные коммуникационные системы (ՌԴ),
18. Институт Новых Технологий (ՌԴ),
19. Некомерческая организация «Доверительный образовательный фонд» (ՌԴ),
20. «Education for a new Era» կազմակերպություն (ԱՄՆ),
21. Միջազգային բակալավրիատ (The International Baccalaureate, Շվեյցարիա),
22. Ֆունդամենտալ ֆիզիկայի միջերկրածովյան ինստիտուտ (Իտալիա):

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

2012-2013 ուստարվանից «Քվանտ» վարժարանում ներդրվել է աշակերտական հետազոտական աշխատանքների կազմակերպման կարգ, որի համաձայն բոլոր աշակերտները, բացի ավարտական դասարանների սաներից, պարտադիր պետք է պատրաստեն հետազոտական աշխատանք որևէ առարկայի շրջանակներում: Կարգի գործարկման արդյունքում ուսումնական 4 տարիների ընթացքում կատարվել է 1018 հետազոտական աշխատանքներ: Այս աշխատանքների շնորհիվ աշակերտները գործնականում ամրապնդում են ձեռք բերած գիտելիքները, ձեռք են բերում հետազոտական հմտություններ և լիովին հաղորդակից լինում բուհում իրենց սպասվելիք հետազոտական աշխատանքների կատարման սկզբունքներին:

2015-2016 ուստարում վարժարանի 89 ուսուցիչներից 58-ը ղեկավարել են հետազոտական աշխատանքներ: 425 աշակերտներ կատարել են 269 անհատական և խմբային հետազոտություններ: Մասնագիտական հանձնաժողովների որոշմամբ լավագույն 18 աշխատանքներն արժանացել են 1-ին, 21-ը՝ 2-րդ, 22-ը՝ 3-րդ կարգի դիպլոմների:

Գրաֆիկ 2. Հետազոտական աշխատանքների և հետազոտող աշակերտների թիվը



Աղյուսակ 9. Հետազոտական աշխատանքների թիվը՝ ըստ ամբիոնների (վարկանիշային աղյուսակ)

N	Ամբիոն	Աշխատանքների թիվը				
		2012/13	*2013/14*	*2014/15*	*2015/16*	*Ընդհ.*
1	Աշխարհագր.	40	42 ↑	47 ↑	34 ↓	163
2	Պատմություն	32	40 ↑	44 ↑	38 ↓	154
3	Անգլերեն	33	24 ↓	26 ↑	37 ↑	120
4	Ֆիզիկա	25	22 ↓	28 ↑	33 ↑	108
5	Ինֆորմ.	32	31 ↓	20 ↓	23 ↑	106
6	Հայոց լ. և գր.	19	25 ↑	34 ↑	21 ↓	99
7	Մաթեմատիկա	16	19 ↑	23 ↑	27 ↑	85
8	Կենսաբան.	9	12 ↑	27 ↑	16 ↓	64
9	Ֆիզկուլտուրա	2	7 ↑	24 ↑	24 -	57
10	Ռուսաց լեզու	11	7 ↓	7 -	8 ↑	33
11	Քիմիա	6	13 ↑	5 ↓	8 ↑	32
	Ընդհանուր	***225***	***242 (↑7,6%)***[1]	***282 (↑16,5%)***	***269 (↓4,6%)***	***1018***

[1] Աճը նախորդ ուստարվա համեմատ:

Աղյուսակ 10. Հետազոտող աշակերտների թիվը՝ ըստ ամբիոնների (վարկանիշային աղյուսակ)

N	Ամբիոն	Աշակերտների թիվը				
		2012/13	*2013/14*	*2014/15*	*2015/16*	*Ընդհ.*
1	Աշխարհագր.	65	76 ↑	83 ↑	54 ↓	278
2	Պատմություն	54	63 ↑	61 ↓	47 ↓	225
3	Ֆիզիկա	49	49 –	40 ↓	69 ↑	207
4	Ինֆորմ.	63	59 ↓	38 ↓	23 ↓	183
5	Անգլերեն	46	37 ↓	38 ↑	52 ↑	173
6	Մաթեմատիկա	27	37 ↑	44 ↑	49 ↑	157
7	Հայոց լ. և գր.	28	32 ↑	52 ↑	37 ↓	149
8	Կենսաբան.	15	25 ↑	39 ↑	31 ↓	110
9	Ֆիզկուլտուրա	3	11 ↑	29 ↑	38 ↑	81
10	Քիմիա	9	29 ↑	8 ↓	14 ↑	60
11	Ռուսաց լեզու	14	7 ↓	7 -	11 ↑	39
	Ընդհանուր	***373***	***425 (↑13,1%)***	***432 (↑1,7%)***	***425 (↓1,6%)***	***1655***

ՀԱՎԵԼՎԱԾ

«ՔՎԱՆՏ» ՎԱՐԺԱՐԱՆԻ 25-ԱՄՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՊՀ-ՈՒՄ

Մայիսի 20-ին ԵՊՀ մեծ դահլիճում տեղի ունեցավ «Քվանտ» վարժարանի 25-ամյա հոբելյանին նվիրված հանդիսավոր միջոցառումը:

25-ամյա ուղի անցած «Քվանտ»-ը, տարիների իր անբասիր աշխատանքի արդյունքում դարձել է ոչ միայն Հայաստանի առաջատար դպրոցներից մեկը, այլև հանրակրթության ոլորտում ճանաչված նորարարական-գիտական կենտրոն, որտեղ մշակվող ու ներդրվող կրթական նոր տեխնոլոգիաների շնորհիվ ակնառու հաջողություններ են արձանագրվել: Վարժարանն առաջինն էր, որտեղ տարբեր դասարանների համար բոլոր առարկաներից սկսեցին գործել օլիմպիական խմբակներ: Դրանցում մեծ թվով, ըստ իրենց նախասիրությունների, խորացնում են իրենց գիտելիքները: 1992 թ.-ից «Քվանտ»-ի աշակերտները ակտիվորեն մասնակցում են դպրոցականների առարկայական օլիմպիադաներին: Վարժարանում գործնական աշխատանքն առաջնային է, իհարկե՝ տեսականի համադրությամբ:

Եվ ահա հոբելյանական տարեդարձի կապակցությամբ «Քվանտ» վարժարանի կողմից կազմակերպվել են բազմաթիվ միջոցառումներ՝ օլիմպիադաներ, մրցույթներ, գիտական զեկուցումների ժողովածուի հրատարակություն և այլն: Պատահական չէր նաև, որ հոբելյանական միջոցառումը կայացավ Մայր բուհում, քանի որ վարժարանի կազմավորման գործընթացում մեծ է եղել համալսարանի դերը:

«Քվանտ» վարժարանի 25-ամյակը շնորհավորելու էին եկել ՀՀ ԿԳՆ, ՀՀ ԳԱԱ, Երևանի քաղաքապետարանի, տարբեր վարչական շրջանների, կրթության և գիտության ոլորտի ներկայացուցիչներ, դասախոսներ, ուսուցիչներ, աշակերտներ: Հյուրերի թվում էին նաև Հռոմի «Թոր Վերգատա» համալսարանի պրոֆեսոր Անդրեյ

Վառլամովը, Սաութհեմփթոնի համալսարանի պրոֆեսոր Ալեքսեյ Կավոկինը:

Ողջունելով հյուրերին՝ ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանը նշեց, որ կրթական համակարգում մեծ է «Քվանտ» վարժարանի դերը, ու թեև այն առաջին ոչ պետական հանրակրթական հաստատությունն էր, այնուամենայնիվ ձևավորեց կրթական նոր քաղաքականություն ու գաղափարախոսություն. «Հաջողությունն այնքան մեծ էր, որ «Քվանտ»-ի օրինակին հետևեց այլ վարժարանների ստեղծումը»:

Միջոցառման ընթացքում կարևորվեց նաև այն հանգամանքը, որ ԵՊՀ առաջատար մասնագետները, աշակերտներին տալով բարձրորակ կրթություն, իրենց ներդրումն են ունեցել կրթօջախի կայացման ու զարգացման գործում: Թերևս պատահական չէ, որ վարժարանի շրջանավարտների մեծ մասն ընդունվում է հենց ԵՊՀ. «Քվանտ»-ի տնօրենությունը դա ամենամեծ ձեռքբերումն է համարում: Այսօր էլ վարժարանի ուսուցչական կազմում մեծամասնություն են կազմում հենց Մայր բուհի դասախոսները:

Ռեկտոր Արամ Սիմոնյանի հրամանով՝ ԵՊՀ ոսկեզօծ հուշամեդալով պարգևատրվեցին «Քվանտ» վարժարանի և ԵՊՀ-ի աշխատակիցներ, ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի տեսական մեխանիկայի ամբիոնի դոցենտ Սմբատ Շահինյանն ու ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի սերվիսի ամբիոնի վարիչ Սեյրան Սուվարյանը, իսկ 9 շրջանավարտներ արժանացան ԵՊՀ պատվոգրերի: «Քվանտ» վարժարանն էլ Երևանի պետական համալսարանին շնորհեց «Լավագույն գործընկեր» մրցանակը:

Կրթության բնագավառում ներդրած ավանդի և վարժարանի հիմնադրման 25-ամյակի կապակցությամբ ՀՀ ԿԳՆ ոսկե մեդալով պարգևատրվեցին «Քվանտ» վարժարանի վաստակավոր ուսուցիչներ Մաելս Ազիզբեկյանը և Գոհար Խաչատրյանը: ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը վարժարանի տնօրեն Ռոբերտ Վարդանյանին հանձնեց «Վիկտոր Համբարձումյան» հուշամեդալը: Երևանի փոխքաղաքապետ Կամո Արեյանն էլ վարժարանի կոլեկտիվին հանձնեց «Երևանի զինանշան» հուշամեդալը:

Հ.Գ.: *«Քվանտ» վարժարանն իրականացնում է նաև տարբեր կրթական ծրագրեր Ռուսաստանի Դաշնության, ԱՄՆ-ի, Կանա-*

դայի, Շվեդիայի և այլ երկրների դպրոցների հետ, անդամակցում է «Միջազգային բակալավրիատ» միջազգային կրթական կազմակերպությանը, գործակցում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի և այլ միջազգային կառույցների հետ: Վերջին տասնամյակում տարբեր առարկաների միջազգային օլիմպիադաներում վարժարանի սաներն արժանացել են 52 մեդալի, որից 8-ը՝ ոսկե, 5-ը՝ արծաթե, 39-ը՝ բրոնզե:

«Երևանի համալսարան» ամսաթերթ, 2016, թիվ 5, էջ 24 [1]

[1] Հոդվածը լույս է տեսել ««Քվանտ» վարժարանի 25-ամյակը նշվեց ԵՊՀ-ում» վերնագրով (հեղինակ՝ Հովհաննես Վարդանյան):

«ՔՎԱՆՏ» ՎԱՐԺԱՐԱՆ

Հաշվետվություն

2015-2016

Ուսումնական տարվա գործունեության

Թուղթ՝ օֆսեթ: Տպագրություն՝ օֆսեթ:
Չափսը՝ 60x84 1/16: Տպագր. 3 մամուլ:
Տպաքանակ՝ 100: